

**«Հեռուստացույցների էներգապիտակավորման մասին»**

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1062/2010**

**ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

**(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի կողմից էներգիայի եւ այլ աղբյուրների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի ստանդարտ տեխնիկական բնութագրի միջոցով նշում կատարելու մասին»

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը<sup>1</sup> եւ մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտեր՝ կապված էներգասպառող այնպիսի արտադրանքի պիտակավորման հետ, որն ունի էներգախնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալությամբ արդյունավետության մակարդակներում էական տարբերություններ.
- 2) հեռուստացույցների կողմից օգտագործվող էներգիան կազմում է Միությունում կենցաղային նպատակներով օգտագործվող ամբողջ էներգիայի պահանջարկի զգալի մասը, եւ համարժեք ֆունկցիոնալությամբ հեռուստացույցներն էներգաարդյունավետության առումով ցուցաբերում են էական տարբերություններ: Հեռուստացույցների էներգաարդյունավետությունը կարելի է էապես բարելավել: Հետեւաբար հեռուստացույցները պետք է համապատասխանեն էներգապիտակավորման վերաբերյալ պահանջներին.

<sup>1</sup> ՊՏ թիվ L 153, 18.6.2010թ., էջ 1:

- 3) պիտակավորման եւ արտադրանքի ստանդարտ տեխնիկական բնութագրի միջոցով հեռուստացույցների էներգաարդյունավետության եւ դրանց էներգասպառման վերաբերյալ նշում կատարելու համար անհրաժեշտ է սահմանել ներդաշնակեցված դրույթներ, որպեսզի արտադրողների համար ապահովվեն խրախուսական միջոցներ՝ հեռուստացույցների էներգաարդյունավետությունը բարելավելու, վերջնական սպառողների կողմից էներգախնայող մոդելների ձեռքբերումը խրախուսելու, այդ արտադրանքի էներգասպառումը նվազեցնելու եւ ներքին շուկայի գործունեությունը խթանելու նպատակով.
- 4) սույն կանոնակարգով եւ «Հեռուստացույցների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 22-ի թիվ 642/2009 կանոնակարգով (ԵՀ)<sup>2</sup> սահմանված դրույթների համակցված ազդեցության արդյունքում էլեկտրաէներգիայի տարեկան խնայողությունը մինչեւ 2020 թվականը կարող էր կազմել 43 ՏՎտ/ժ՝ համեմատած այն իրավիճակի հետ, որը կլիներ որեւէ միջոց չձեռնարկելու դեպքում.
- 5) պիտակի վրա ներկայացված տեղեկությունները պետք է ձեռք բերվեն հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերի կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների, ներառյալ՝ առկայության դեպքում ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա, ինչպես թվարկված է Տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի, ինչպես նաեւ Տեղեկատվական հասարակության ծառայությունների կանոնների ոլորտներում տեղեկությունների տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի I հավելվածում<sup>3</sup>.

<sup>2</sup> ՊՏ L 191, 23.7.2009թ., էջ 42:

<sup>3</sup> ՊՏ L 204, 21.7.1998թ., էջ 37:

- 6) սույն կանոնակարգով պետք է սահմանվեն հեռուստացույցների պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը.
- 7) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն հեռուստացույցների տեխնիկական փաստաթղթերին եւ տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները.
- 8) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն հեռուստացույցների հեռակա վաճառքի ցանկացած ձեւի դեպքում գովազդում եւ տեխնիկական գովազդային նյութերում տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջները.
- 9) էներգախնայող հեռուստացույցների արտադրությունը խթանելու նպատակով այն մատակարարներին, որոնք ցանկանում են շուկայահանել էներգաարդյունավետության ավելի բարձր դասերի պահանջներին համապատասխանող հեռուստացույցներ, պետք է թույլատրել այդ դասերի նշամբ պիտակների տրամադրումը նախքան այդպիսի դասերի պարտադիր նշման ամսաթիվը.
- 10) պետք է նախատեսել սույն կանոնակարգի վերանայումը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### *Հոդված 1*

#### **Կարգավորման առարկան**

Սույն կանոնակարգով սահմանվում են հեռուստացույցների պիտակավորմանը եւ արտադրանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:

## Հոդված 2

### Սահմանումները

Ի հավելումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «հեռուստացույց» նշանակում է հեռուստատեսային ընդունիչ կամ հեռուստաէկրան.
- 2) «հեռուստատեսային ընդունիչ» նշանակում է հիմնականում տեսաձայնային ազդանշանների հաղորդման եւ ընդունման համար նախատեսված արտադրատեսակ, որը շուկայահանվում է որեւէ մոդելի կամ համակարգի անվանմամբ, եւ որն ունի հետևյալ բաղադրիչները՝
  - ա) ցուցադրիչ.
  - բ) մեկ կամ մի քանի թյուներ/ընդունիչ եւ տվյալների պահպանման եւ (կամ) ցուցադրման համար լրացուցիչ հարմարանքներ, ինչպիսիք են թվային տեսասկավառակը (DVD), կոշտ սկավառակը (HDD) կամ տեսամագնիստֆոնը (VCR)՝ ցուցադրիչի հետ միասին մեկ համակցված սարքի կամ մի քանի սարքերի տեսքով.
- 3) «հեռուստաէկրան» նշանակում է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ հեռուստատեսային հեռարձակման ազդանշաններից ստացված տեսաազդանշանը ինտեգրացված էկրանի վրա ցուցադրելու համար նախատեսված սարք, որը հնարավորություն է տալիս կարգավորելու եւ վերարտադրելու արտաքին սարքերից ստանդարտ տեսաազդանշանային կապուղիների, այդ թվում՝ cinch-ի (կոմպոնենտային, կոմպոզիտային), SCART-ի, HDMI-ի եւ ստանդարտ անլար կապի (բայց ոչ DVI եւ SDI տեսակի ոչ ստանդարտ տեսաազդանշանային կապուղիների) միջոցով ստացված տեսաձայնային ազդանշանները, սակայն որը չի կարող ընդունել եւ մշակել հեռարձակված ազդանշանները.

- 4) «միացված ռեժիմ» նշանակում է հեռուստացույցի այն վիճակը, երբ այն միացված է էլեկտրասնուցման աղբյուրին եւ վերարտադրում է տեսաձայնային ազդանշանները.
- 5) «տնային ռեժիմ» նշանակում է հուստացույցի ռեժիմների այնպիսի կարգավորում, որը խորհուրդ է տրվում արտադրողի կողմից նորմալ տնային օգտագործման համար.
- 6) «սպասման ռեժիմ (ռեժիմներ)» նշանակում է այն վիճակը, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, սարքավորման նորմալ աշխատանքը կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիայից, եւ այն ապահովում է միայն հետեւյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակով՝
- ա) վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա՝ միայն վերաակտիվացման ֆունկցիայի ակտիվացված լինելու մասին ցուցանշումով, եւ (կամ)
  - բ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում.
- 7) «անջատված ռեժիմ» նշանակում է այն վիճակը, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին եւ չի ապահովում որեւէ ֆունկցիայի կատարում. անջատված ռեժիմ է համարվում նաեւ հետեւյալը՝
- ա) միայն անջատված վիճակի ցուցանշում ապահովող վիճակ.
  - բ) էլեկտրամագնիսական համատեղելիություն ապահովելու համար նախատեսված ֆունկցիոնալ հնարավորություններ ենթադրող վիճակ՝ համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004/108/ԵՀ հրահանգի<sup>1</sup>.
- 8) «վերաակտիվացման ֆունկցիա» նշանակում է ֆունկցիա, որով հեռակառավարման անջատիչի, այդ թվում՝ հեռակառավարման վահանակի,

<sup>1</sup>ՊՏ L 390, 31.12.2004թ., էջ 24:

ներքին սենսորի եւ լրացուցիչ ֆունկցիաներ, այդ թվում՝ միացված ռեժիմ ակտիվացնող թայմերի միջոցով հնարավոր է դառնում այլ ռեժիմների, այդ թվում՝ միացված ռեժիմի ակտիվացվումը.

- 9) «տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում» նշանակում է շարունակական գործառույթ, որը տեղեկություններ է տրամադրում սարքավորման մասին կամ ցույց է տալիս դրա կարգավիճակը ցուցադրիչի, այդ թվում՝ ժամացույցների վրա.
- 10) «պարտադիր մենյու» նշանակում է արտադրողի կողմից հեռուստացույցի նախապես սահմանված կարգավորումների ցանկ, որից օգտագործողն ընտրություն է կատարում հեռուստացույցն առաջին անգամ միացնելիս.
- 11) «պայծառության առավելագույն տոկոս» նշանակում է հեռուստացույցի տնային ռեժիմի կամ միացված ռեժիմի պայմաններում պայծառության առավելագույն տոկոսը, որը համապատասխան դեպքերում սահմանվել է մատակարարի կողմից, եւ ամենապայծառ միացված ռեժիմի պայմաններում առավելագույն պայծառության տոկոսը.
- 12) «վաճառքի կետ» նշանակում է վայր, որտեղ հեռուստացույցները ցուցադրվում են կամ առաջարկվում վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար.
- 13) «վերջնական սպառող» նշանակում է սպառող, որը գնում է կամ ակնկալվում է, որ կգնի հեռուստացույց:

### Հոդված 3

#### **Մատակարարների պարտականությունները**

1. Մատակարարներն ապահովում են, որ՝
  - ա) յուրաքանչյուր հեռուստացույց համալրված լինի V հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող տպագրված պիտակով.

- բ) տրամադրվեն III հավելվածով սահմանված արտադրանքի տեղեկաթերթիկները.
- գ) անդամ պետությունների լիազորված մարմիններին եւ Հանձնաժողովին ներկայացված պահանջի դեպքում տրամադրվեն IV հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) հեռուստացույցի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը տեղեկություններ է պարունակում էներգասպառման եւ էներգախնայողության կամ գնի վերաբերյալ.
- ե) հեռուստացույցի որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշ տեխնիկական պարամետրեր, ներառի այդ մոդելի էներգաարդյունավետության դասը:
2. Էներգաարդյունավետության դասերը հիմնվում են II հավելվածի համաձայն հաշվարկված էներգաարդյունավետության ինդեքսի վրա:
3. V հավելվածով սահմանված պիտակի ձեւաչափը կիրառվում է հետեւյալ ժամանակացույցին համապատասխան՝
- ա) այն հեռուստացույցների դեպքում, որոնք շուկայահանվել են 2011 թվականի նոյեմբերի 30-ից, հեռուստացույցների՝
- i) A, B, C, D, E, F եւ G էներգաարդյունավետության դասերով պիտակները պետք է համապատասխանեն V հավելվածի 1-ին կետին, կամ եթե մատակարարներն անհրաժեշտ են համարում՝ այդ հավելվածի 2-րդ կետին.
- ii) A+ էներգաարդյունավետության դասով պիտակները պետք է համապատասխանեն V հավելվածի 2-րդ կետին.
- iii) A++ էներգաարդյունավետության դասով պիտակները պետք է համապատասխանեն V հավելվածի 3-րդ կետին.

- iv) A+++ էներգաարդյունավետության դասով պիտակները պետք է համապատասխանեն V հավելվածի 4-րդ կետին.
- բ) այն հեռուստացույցների դեպքում, որոնք շուկայահանվել են 2014 թվականի հունվարի 1-ից A+, A, B, C, D, E եւ F էներգաարդյունավետության դասերով, պիտակները պետք է համապատասխանեն V հավելվածի 2-րդ կետին, կամ եթե մատակարարներն անհրաժեշտ են համարում՝ այդ հավելվածի 3-րդ կետին.
- գ) այն հեռուստացույցների դեպքում, որոնք շուկայահանվել են 2017 թվականի հունվարի 1-ից A++, A+, A, B, C, D եւ E էներգաարդյունավետության դասերով, պիտակները պետք է համապատասխանեն V հավելվածի 3-րդ կետին, կամ եթե մատակարարներն անհրաժեշտ են համարում՝ այդ հավելվածի 4-րդ կետին.
- դ) այն հեռուստացույցների դեպքում, որոնք շուկայահանվել են 2020 թվականի հունվարի 1-ից A+++, A++, A+, A, B, C եւ D էներգաարդյունավետության դասերով, պիտակները պետք է համապատասխանեն V հավելվածի 4-րդ կետին:

#### *Հոդված 4*

#### **Վաճառողների պարտականությունները**

Վաճառողներն ապահովում են, որ՝

- ա) վաճառքի կետում ներկայացված յուրաքանչյուր հեռուստացույցի առջեւի մասում 3(1) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես զետեղված լինի, որ այն հստակ տեսանելի լինի.



- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող հեռուստացույցներն այն դեպքում, երբ չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված հեռուստացույցը, շուկայահանվեն VI հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրվելիք տեղեկություններով.
- գ) հեռուստացույցի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը տեղեկություններ է պարունակում էներգասպառման եւ էներգախնայողության կամ գնի վերաբերյալ.
- դ) հեռուստացույցի որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշ տեխնիկական պարամետրեր, ներառի այդ մոդելի էներգաարդյունավետության դասը:

#### *Հոդված 5*

#### **Չափման մեթոդները**

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերով, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների վրա, ինչպես որ սահմանված է VII հավելվածով:

#### *Հոդված 6*

#### **Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող**

#### **ստուգման ընթացակարգը**

Էներգաարդյունավետության հայտարարված դասի համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են VIII հավելվածով սահմանված ընթացակարգը:

*Հոդված 7***Վերանայումը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, Հանձնաժողովը վերանայում է այն՝ ելնելով տեխնոլոգիական առաջընթացից:

*Հոդված 8***Անցումային դրույթը**

3(1)(դ) եւ (ե) հոդվածը եւ 4(բ), (գ) եւ (դ) հոդվածը չեն կիրառվում տպագրված այն գովազդի եւ տեխնիկական գովազդային նյութերի դեպքում, որոնք հրապարակվել են նախքան 2012 թվականի մարտի 30-ը:

*Հոդված 9***Ուժի մեջ մտնելը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Կիրառելի է 2011 թվականի նոյեմբերի 30-ից: Այնուամենայնիվ, 3(1)(դ) եւ (ե) հոդվածը եւ 4(բ), (գ) եւ (դ) հոդվածը կիրառվում են 2012 թվականի մարտի 30-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2010 թվականի սեպտեմբերի 28-ին:

*Հանձնաժողովի կողմից՝*

*Նախագահ*

Ժոզե Մանուել ԲԱՂՈՉՈՒ

## ՀԱՎԵԼՎԱԾ 11

**Էներգաարդյունավետության դասը**

Հեռուստացույցի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսի (էԱԻ) հիման վրա, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակում: Հեռուստացույցի էներգաարդյունավետության ինդեքսը սահմանվում է II հավելվածի 1-ին կետի համաձայն:

## Աղյուսակ 1

**Հեռուստացույցի էներգաարդյունավետության դասը**

Էներգաարդյունավետության դաս	Էներգաարդյունավետության ինդեքս
A+++ (ամենաարդյունավետ)	$էԱԻ < 0,10$
A++	$0,10 \leq էԱԻ < 0,16$
A+	$0,16 \leq էԱԻ < 0,23$
A	$0,23 \leq էԱԻ < 0,30$
B	$0,30 \leq էԱԻ < 0,42$
C	$0,42 \leq էԱԻ < 0,60$
D	$0,60 \leq էԱԻ < 0,80$
E	$0,80 \leq էԱԻ < 0,90$
F	$0,90 \leq էԱԻ < 1,00$
G (ամենաքիչ արդյունավետ)	$1,00 \leq էԱԻ$

## ՀԱՎԵԼՎԱԾ II

**Էներգաարդյունավետության ինդեքսը եւ միացված ռեժիմում տարեկան  
էներգասպառումը հաշվարկելու մեթոդը**

1. Էներգաարդյունավետության ինդեքսը ( $E_{UH}$ ) հաշվարկվում է որպես  $E_{UH} = P/P_{ստ.} (\zeta)$ , որտեղ՝
  - $E_{ստ.} (A) = E_{հիմնական} + \zeta \times 4,3224 \text{ Վտ/դմ}^2$ .
  - $E_{հիմնական} = 20 \text{ Վտ}$ ՝ մեկ թյուներով/ընդունիչով եւ առանց կոշտ սկավառակի հեռուստատեսային ընդունիչի դեպքում.
  - $E_{հիմնական} = 24 \text{ Վտ}$ ՝ կոշտ սկավառակով (սկավառակներով) հեռուստատեսային ընդունիչի դեպքում.
  - $E_{հիմնական} = 24 \text{ Վտ}$ ՝ երկու կամ ավելի թյուներ/ընդունիչով հեռուստատեսային ընդունիչի դեպքում.
  - $E_{հիմնական} = 28 \text{ Վտ}$ ՝ կոշտ սկավառակով (սկավառակներով) եւ երկու կամ ավելի թյուներով/ընդունիչով հեռուստատեսային ընդունիչի դեպքում.
  - $E_{հիմնական} = 15 \text{ Վտ}$ ՝ մոնիտորների համար.
  - $\zeta$ -ն էկրանի տեսանելի հատվածն է՝ արտահայտված դմ<sup>2</sup>-ով.
  - $E$ -ն միացված ռեժիմում հեռուստացույցի էներգասպառումն է՝ արտահայտված վատտով, որը չափվում է VII հավելվածի համաձայն եւ կլորացվում մինչեւ տասնորդական նիշը:
2. Միացված ռեժիմում տարեկան էներգասպառումը՝  $E$ -ն՝ արտահայտված կՎտժ-ով, հաշվարկվում է որպես  $E = 1,46 \times E$ :
3. Պայծառության ավտոմատ կարգավորմամբ հեռուստացույցներ:
  - 1-ին եւ 2-րդ կետերում նշված էներգաարդյունավետության ինդեքսը եւ

միացված ռեժիմում տարեկան էներգասպառումը հաշվարկելու նպատակներով VII հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ միացված ռեժիմում էներգասպառումը կրճատվում է 5 %-ով, եթե հեռուստացույցը շուկայահանելիս բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) տնային ռեժիմի կամ միացված ռեժիմի պայմաններում մատակարարի կողմից սահմանված՝ հեռուստացույցի պայծառությունն ավտոմատ կերպով նվազեցվում է միջավայրի առնվազն 20 լյուքս եւ 0 լյուքս լուսավորությունների միջեւ.

բ) մատակարարի կողմից սահմանված՝ հեռուստացույցի տնային ռեժիմի կամ միացված ռեժիմի պայմաններում ակտիվանում է պայծառության ավտոմատ կարգավորման ֆունկցիան:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

1. Հեռուստացույցի՝ արտադրանքի վերաբերյալ տեղեկաթերթիկի մեջ զետեղված տեղեկությունները պետք է ներկայացված լինեն հետևյալ հերթականությամբ եւ ներառված լինեն արտադրանքի բրոշյուրի կամ արտադրանքի հետ տրամադրվող այլ գրականության մեջ՝
  - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
  - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որտեղ մոդելի նույնականացուցիչը սովորաբար տառաթվային այն ծածկագիրն է, որով հեռուստացույցի որոշակի մոդել տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
  - գ) մոդելի էներգաարդյունավետության դասը՝ I հավելվածի 1-ին աղյուսակի համաձայն. եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգի (ԵԽ)<sup>1</sup> համաձայն հեռուստացույցին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա այս տեղեկությունները կարող են ներառվել.
  - դ) էկրանի տեսանելի անկյունագիծը՝ արտահայտված սանտիմետրերով եւ դյույմերով.
  - ե) միացված ռեժիմում էներգասպառումը, որը չափվել է VII հավելվածով սահմանված ընթացակարգի համաձայն.
  - զ) II հավելվածի համաձայն հաշվարկված տարեկան էներգասպառումը՝ արտահայտված կՎտժ/տարի-ով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը. այն նկարագրվում է որպես «ԿՎտժ/տարի-ով

<sup>1</sup>ՊՏ L 27, 30.1.2010թ., էջ 1:

արտահայտված XYZ էներգասպառում, որի հիմքում ընկած է այն հեռուստացույցի էներգասպառումը, որը շահագործվում է 365 օր՝ օրական 4 ժամ տևողությամբ: Փաստացի էներգասպառումը կախված է հեռուստացույցի օգտագործման եղանակից:».

է) սպասման կամ անջատված ռեժիմում կամ երկու ռեժիմներում էլ էներգասպառումը, որը չափվել է VII հավելվածով սահմանված ընթացակարգի համաձայն.

ը) Էկրանի վրա պատկերի ռեգուլյուցիան (թողատվություն)՝ ֆիզիկական հորիզոնական եւ ուղղահայաց պիքսել խտությամբ:

2. Մեկ տեղեկաթերթիկը կարող է վերաբերել միեւնույն մատակարարի կողմից մատակարարվող հեռուստացույցի մի շարք մոդելների:

3. Տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի տեսքով՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ: Այս դեպքում 1-ին կետում նշված տեղեկությունները, որոնք դեռեւս ներկայացված չեն պիտակի վրա, պետք է նույնպես տրամադրվեն:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ 16***Տեխնիկական փաստաթղթերը**

3(1)(գ) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝

- ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
- բ) հեռուստացույցի մոդելի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է դրա միանշանակ եւ դյուրին նույնականացման համար.
- գ) անհրաժեշտության դեպքում հղումներ կիրառված ներդաշնակեցված ստանդարտներին.
- դ) անհրաժեշտության դեպքում օգտագործված մյուս տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
- ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու նպատակով լիազորված անձի նույնականացման տվյալները եւ նրա ստորագրությունը.
- զ) չափումների համար փորձարկումների պարամետրերը՝
  - i) միջավայրի ջերմաստիճանը.
  - ii) վոլտերով արտահայտված փորձնական լարումը եւ հերցերով արտահայտված հաճախականությունը.
  - iii) էլեկտրամատակարարման համակարգի ընդհանուր ոչ գծային աղավաղումները.
  - iv) փորձնական տեսաձայնային ազդանշանների մուտքի աղբյուրները.
  - v) էլեկտրական ստուգման համար օգտագործված սարքավորումների, դրանց տեղակայման եւ սխեմաների մասին տեղեկությունները եւ փաստաթղթերը.




- է) միացված ռեժիմի պարամետրերը՝
- i) ակտիվ հզորության մասին տվյալները՝ արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչեւ տասնորդական նիշը՝ մինչեւ 100 Վտ հզորությունների դեպքում, ու մինչեւ առաջին ամբողջ թիվը՝ 100 Վտից մեծ հզորությունների դեպքում.
  - ii) հեռարձակվող ստանդարտ դինամիկական հեռուստապատկերի տեսաազդանշանի բնութագրերը.
  - iii) էներգասպառման մասով կայուն վիճակ ապահովելու համար պահանջվող քայլերի հաջորդականությունը.
  - iv) պարտադիր մենյուով հեռուստացույցների դեպքում՝ տնային ռեժիմում հեռուստացույցի պայծառության առավելագույն աստիճանի եւ միացված ռեժիմում հեռուստացույցի պայծառության առավելագույն աստիճանի հարաբերակցությունը՝ արտահայտված տոկոսով.
  - v) հեռուստատեսային մոնիտորների դեպքում՝ չափումների ժամանակ օգտագործված թյունների համապատասխան բնութագրերը.
- ը) սպասման կամ անջատված ռեժիմներից յուրաքանչյուրի դեպքում՝
- i) ակտիվ հզորության վերաբերյալ տվյալները՝ արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդական նիշը.
  - ii) օգտագործված չափման մեթոդը.
  - iii) ռեժիմի ընտրության կամ ծրագրավորման նկարագրությունը.
  - iv) դեպքերի հաջորդականությունը՝ ապահովելու այնպիսի ռեժիմ, որ հեռուստացույցն ավտոմատ կերպով փոփոխի ռեժիմները:
-

## ՀԱՎԵԼՎԱԾ V

## Պիտակ

## 1. ՊԻՏԱԿ 1



ա) Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որտեղ «մոդելի նույնականացուցիչը» սովորաբար տառաթվային այն ծածկագիրն է, որով հեռուստացույցի որոշակի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.


- III. հեռուստացույցի էներգաարդյունավետության դասը, որը սահմանվում է I հավելվածի համաձայն: Հեռուստացույցի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- IV. միացված ռեժիմում էներգասպառումը Վտ-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.
- V. միացված ռեժիմում տարեկան էներգասպառումը՝ հաշվարկված II հավելվածի 2-րդ կետի համաձայն, արտահայտված կՎտժ-ով եւ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.
- VI. էկրանի տեսանելի անկյունագիծը՝ արտահայտված դյույմերով եւ սանտիմետրերով:

Եթե հեռուստացույցն ունի աչքի ընկնող անջատիչ, որի միջոցով հեռուստացույցը կարող է բերվել «անջատված» ռեժիմի՝ 0.01 Վտ-ն չգերազանցող ակտիվ հզորությամբ, ապա կարող է ավելացվել 5-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված նշանը:

Եթե թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն մոդելին շնորհվել է «Եվրոպական միության էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:


- բ) Պիտակի ձեւի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 5-րդ կետին:

2. ՊԻՏԱԿ 2



- ա) Պիտակը պետք է ներառի 1-ին կետի «ա» ենթակետում թվարկված տեղեկությունները:
- բ) Պիտակի ձեռի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 5-րդ կետին:


3. ՊԻՏԱԿ 3



ա) Պիտակը պետք է ներառի 1-ին կետի «ա» ենթակետում թվարկված տեղեկությունները:

բ) Պիտակի ձեւի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 5-րդ կետին:


4. ՊԻՏԱԿ 4



ա) Պիտակը պետք է ներառի 1-ին կետի «ա» ենթակետում թվարկված տեղեկությունները:

բ) Պիտակի ձեւի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 5-րդ կետին:

5. Պիտակի ձևը պետք է համապատասխանի հետևյալ պատկերին՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 60 մմ լայնություն եւ 120 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համապատասխանի վերոնշյալ մասնագրերին.

բ) 29 դմ<sup>2</sup> -ից ավելի մեծ էկրան ունեցող հեռուստացույցների դեպքում ֆոնը պետք է լինի սպիտակ: 29 դմ<sup>2</sup> կամ դրանից փոքր էկրան ունեցող հեռուստացույցների դեպքում ֆոնը պետք է լինի սպիտակ կամ թափանցիկ.

- գ) գույներն ունեն ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին եւ սեւ ու ներկայացվում են համաձայն հետեւյալ օրինակի՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.
- դ) պիտակը պետք է բավարարի բոլոր հետեւյալ պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)
- Պիտակի սահմանագծեր՝** 3 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:
  - ԵՄ պատկերանիշ՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
  - Պիտակի պատկերանիշեր՝**  
գույն՝ X-00-00-00  
Գրաֆիկական պատկերը, ինչպես ցուցադրված է, ԵՄ պատկերանիշը եւ պիտակի պատկերանիշը (համակցված)՝ լայնությունը՝ 51 մմ, բարձրությունը՝ 9 մմ:
  - Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, երկարություն՝ 51 մմ:
  - A-G սանդղակը՝**
    - Սլաքը՝ բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0.75 մմ՝ գույներ՝
      - Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,
      - Երկրորդ դասը՝ 70-00-X-00,
      - Երրորդ դասը՝ 30-00-X-00,
      - Չորրորդ դասը՝ 00-00-X-00,
      - Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,
      - Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,



— Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝ «Կալիբրի»** տառատեսակ, թավ 10 կետ, մեծատառ, սպիտակ. «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 7 կետ, մեծատառ, սպիտակ:

#### 6. Էներգաարդյունավետության դասը՝

— **Սլաքը՝** լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 8 մմ, 100 % սեւ:

— **Տեքստը՝ «Կալիբրի»** տառատեսակ, թավ 15 կետ, մեծատառ, սպիտակ. «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 10 կետ, մեծատառ, սպիտակ:

#### 7. Էներգիա՝

— **Տեքստը՝ «Կալիբրի»** տառատեսակ, սովորական 7 կետ, մեծատառ, 100 % սեւ:

#### 8. Անջատիչի պատկերանիշը՝

— **Գրաֆիկական պատկերը, ինչպես ցուցադրված է՝** 1 կետ՝ գույն՝ կապտականաչ 100 %՝ կլոր անկյուններ՝ 3.5 մմ:

#### 9. Միացված ռեժիմում էներգասպառմանն առնչվող տեքստը՝

— **Եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:

— **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, 100 % սեւ:

— **Երկրորդ տողը՝ «Կալիբրի»** տառատեսակ, սովորական 11 կետ, 100 % սեւ:

#### 10. Հեռուստացույցի էկրանի անկյունագծի չափը՝

— **Գրաֆիկական պատկերը, ինչպես ցուցադրված է՝**

— **Եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր

անկյուններ՝ 3.5 մմ:

- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, 100 % սեւ:  
«Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, 100 % սեւ:

**11. Տարեկան էներգասպառմանն առնչվող տեքստը՝**

- **Եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:
- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 25 կետ, 100 % սեւ:
- **Երկրորդ տողը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, 100 % սեւ:

**12. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**

**13. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը:**

**14. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի վերաբերյալ տեղեկությունները պետք է տեղավորվեն 51 x 8 մմ տարածության մեջ:**

**15. Հաշվետու ժամանակաշրջանը.**

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 8 կետ.

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, նեղ 9 կետ:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ VI***Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում, երբ վերջնական սպառողները չեն կարող տեսնել ցուցադրված արտադրանքը**

1. 4(բ) հոդվածի կետում նշված տեղեկությունները տրամադրվում են հետևյալ հերթականությամբ՝
    - ա) մոդելի էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է I հավելվածում.
    - բ) էներգասպառումը միացված ռեժիմում, ինչպես սահմանված է II հավելվածում.
    - գ) տարեկան էներգասպառումը, ինչպես սահմանված է II հավելվածի 2-րդ կետում.
    - դ) էկրանի տեսանելի անկյունագիծը:
  2. Եթե տրամադրվում են նաեւ արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, ապա դրանք պետք է տրամադրվեն III հավելվածում նշված ձեւով եւ կարգով:
  3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթերցանելի տառաչափով եւ տառատեսակով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Չափումները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով չափումները պետք է իրականացվեն հուսալի, ճշգրիտ, վերարտադրելի ընթացակարգերի կիրառմամբ, որոնք հիմնվում են արդիական եւ համընդհանուր ճանաչում ունեցող մեթոդների, այդ թվում՝ այն փաստաթղթերով սահմանված մեթոդների վրա, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:
2. **II հավելվածի 1-ին կետում նշված՝ միացվածի ռեժիմում էներգասպառման չափումները**
  - ա) Ընդհանուր պայմանները՝
    - i) չափումները պետք է կատարվեն միջավայրի ջերմաստիճանի  $23\text{ }^{\circ}\text{C} \pm 5\text{ }^{\circ}\text{C}$  պայմաններում.
    - ii) չափումները կատարելիս պետք է օգտագործվի հեռարձակվող ստանդարտ դինամիկական հեռուստապատկերի տեսաազդանշան. որպես արդյունք, ընդունվում է 10 րոպե անընդմեջ չափումների ընթացքում գրանցված միջին հզորությունը.
    - iii) չափումների կատարումը պետք է սկսել այն բանից հետո, երբ հեռուստացույցը առնվազն մեկ ժամ գտնվել է «անջատված» ռեժիմում եւ այնուհետեւ՝ առնվազն մեկ ժամ «միացված» ռեժիմում, եւ ավարտել նախքան այն առավելագույնը 3 ժամ կգտնվի «միացված» ռեժիմի պայմաններում: «Միացված» ռեժիմում գտնվելու ամբողջ ընթացքում պետք է էկրանի վրա ցուցադրվի համապատասխան տեսաազդանշանը: Այն հեռուստացույցների

համար, որոնք կայուն վիճակի են գալիս մեկ ժամվա ընթացքում, այս տեւողությունը կարող է կրճատվել, եթե չափումները ցույց են տալիս, որ վերը նկարագրված տեւողությամբ իրականացված չափումների համեմատ արդյունքները շեղվում են ոչ ավելի, քան 2 տոկոսով.

- iv) չափումները պետք է կատարվեն 2%-ից պակաս կամ դրան համարժեք անճշտությամբ՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ.
- v) չափումները պետք է կատարվեն «պայծառության ավտոմատ կարգավորման» ֆունկցիան ապասկտիվացնելուց հետո, եթե այդպիսի ֆունկցիա կա: Եթե «պայծառության ավտոմատ կարգավորման» ֆունկցիան հնարավոր չէ ապասկտիվացնել, ապա չափումները պետք է կատարվեն միջավայրի լուսավորության սենսորի վրա 300 լք եւ ավելի մեծ ինտենսիվության լույս զգելու պայմաններում:
- բ) Միացված ռեժիմում հեռուստացույցների էներգասպառումը չափելու պայմանները՝
  - i) պարտադիր մենյու չունեցող հեռուստացույցների դեպքում էներգասպառման չափումները պետք է իրականացվեն արտադրողի կողմից նախապես կարգավորված «միացված» ռեժիմում, այսինքն՝ հեռուստացույցի պայծառության կարգավորումները պետք է լինեն արտադրողի կողմից վերջնական սպառողի համար կարգավորված վիճակում.
  - ii) պարտադիր մենյու ունեցող հեռուստացույցների դեպքում էներգասպառումը չափվում է տնային ռեժիմի պայմաններում.
  - iii) պարտադիր մենյու չունեցող հեռուստատեսային մոնիտորների դեպքում հեռուստատեսային մոնիտորին պետք է միացվի

համապատասխան թյուներ: Էներգասպառման չափումները պետք է իրականացվեն արտադրողի կողմից նախապես կարգավորված «միացված» ռեժիմում, այսինքն՝ հեռուստացույցի մոնիտորի պայծառության կարգավորումները պետք է լինեն արտադրողի կողմից վերջնական սպառողի համար կարգավորված վիճակում: Թյունների էներգասպառումը հաշվի չի առնվում «միացված» ռեժիմում հեռուստացույցի մոնիտորի էներգասպառումը չափելիս:

- iv) պարտադիր մենյու ունեցող հեռուստատեսային մոնիտորների դեպքում հեռուստատեսային մոնիտորին պետք է միացվի համապատասխան թյուներ: Էներգասպառումը չափվում է «տնային ռեժիմի» պայմաններում:

**3. III հավելվածի 1-ին կետի «է» ենթակետում նշված՝ սպասման եւ (կամ) անջատված ռեժիմում էներգասպառման չափումները**

0,50 Վտ կամ ավելի հզորությունների չափումները պետք է կատարվեն 2%-ից պակաս կամ դրան համարժեք անճշտությամբ՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ: 0,50 Վտ-ից պակաս հզորությունների չափումները պետք է կատարվեն 0,01 Վտ-ից պակաս կամ դրան համարժեք անճշտությամբ՝ ապահովելով վստահելիության 95% մակարդակ:

**4. VIII հավելվածի 2-րդ կետի «գ» ենթակետում նշված պայծառության առավելագույն չափումները**

- ա) Պայծառության չափումը պետք է իրականացվի պայծառաչափով Էկրանի այն հատվածում, որտեղ ցուցադրվում է ամբողջությամբ (100%-ով) սպիտակ պատկեր, որպես «Էկրանի լրիվ բացվածքի թեստ», որը թույլ չի տալիս, որ APL (պատկերի միջին մակարդակ) ցուցանիշը գերազանցի այն մակարդակը, որի դեպքում պայծառության կարգավորման համակարգն ավտոմատաբար թուլացնում է հզորությունը:

բ) Պայժառության տոկոսը չափելիս պետք է չափումները կատարել հեռուստացույցի տնային ռեժիմի կամ միացված ռեժիմի պայմաններում, որը մատակարարի կողմից սահմանվել է որպես կիրառելի, եւ միացված ռեժիմի պայմաններում՝ առանց տեղաշարժելու պայժառաչափը էկրանի այլ կետ:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ VIII***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող  
ստուգման ընթացակարգը**

3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների մարմինները II հավելվածի 1-ին կետում նշված՝ միացված ռեժիմում էներգասպառման եւ III հավելվածի 1-ին կետի «է» ենթակետում նշված՝ սպասման եւ (կամ) անջատված ռեժիմներում էներգասպառման համար կիրառում են ստուգման հետեյալ ընթացակարգը.

1. Անդամ պետության մարմիններն անցկացնում են մեկ միավորի ստուգում:
2. Համարվում է, որ մոդելը համապատասխանում է միացված ռեժիմում էներգասպառման հայտարարված արժեքին եւ սպասման եւ (կամ) անջատված ռեժիմներում էներգասպառման հայտարարված արժեքներին, եթե՝
  - ա) միացված ռեժիմում էներգասպառման արդյունքը չի գերազանցում էներգասպառման հայտարարված արժեքն ավելի, քան 7 %-ով, եւ
  - բ) կիրառելիության դեպքում, սպասման եւ անջատված ռեժիմներում էներգասպառման արդյունքները չեն գերազանցում էներգասպառման հայտարարված արժեքներն ավելի, քան 0.10 Վտ-ով, եւ
  - գ) առավելագույն պայծառության տոկոսի արդյունքը բարձր է 60 տոկոսից:
3. Եթե 2-րդ կետի «ա», «բ» կամ «գ» կետերում նշված արդյունքները չեն ապահովվում, փորձարկման պետք է ենթարկվեն տվյալ մոդելի եւս երեք միավոր:
4. Նույն մոդելի եւս երեք միավոր ստուգելուց հետո համարվում է, որ մոդելը համապատասխանում է սպասված ռեժիմում էներգասպառման



հայտարարված արժեքին, ինչպես նաև սպասման եւ անջատված ռեժիմներում էներգասպառման հայտարարված արժեքներին, եթե՝

- ա) միացված ռեժիմում նշված երեք միավորների միջին ակտիվ հզորությունը չի գերազանցում էներգասպառման հայտարարված արժեքն ավելի, քան 7 տոկոսով, եւ
  - բ) կիրառելիության դեպքում, սպասման եւ անջատված ռեժիմներում նշված երեք միավորների միջին ակտիվ հզորությունը չի գերազանցում էներգասպառման հայտարարված արժեքներն ավելի, քան 0.10 Վտ-ով, եւ
  - գ) նշված երեք միավորների առավելագույն պայծառության տոկոսի միջին արդյունքը բարձր է 60 տոկոսից:
5. Եթե (4)(ա) կամ (բ) կամ (գ) կետերում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա համարվում է, որ մոդելը չի համապատասխանում պահանջներին:
-